Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 19-ի N 723 - Լ որոշման

ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՀԵՏՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՄՆԱՎՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ներկայումս պետության կողմից կենսաթոշակ կամ սոցիալական պաշտպանության (ապահովության) ծրագրերով նախատեսված՝ պարբերական բնույթ կրող (որոշակի կամ անորոշ ժամկետով տրվող) նպաստ կամ դրամական այլ վճար ստացող շահառուները, ինչպես և Հայաստանի Հանրապետության և համաշխարհային տնտեսությունը, ուղղակիորեն առնչվում են բարձր գնաճային երևույթների հետ, ինչի հետևանքով նվազում է սպառողների գնողունակությունը, իսկ խոցելի խմբերի շահառուների համար խնդիրն ավելի է սրվում, մասնավորապես, առաջին անհրաժեշտության ապրանքների և սննդամթերքի ձեռքբերման մասով:

2. Տնտեսության ներկայիս պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված՝ կենսաթոշակների, նպաստների կամ դրամական այլ վճարների նպատակային ավելացումներին զուգընթաց անհրաժեշտություն է առաջանում իրականացնել պետությունից կենսաթոշակ ստացող շահառուների գնողունակության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ նաև այլ գործիքներով:

3. Անկանխիկ եղանակով պետությունից դրամական պարբերական վճարներ ստացող շահառուները, որոշ դեպքերում, չեն կիրառում անկանխիկ գործառնությունների ամբողջ գործիքակազմը, ինչի ամբողջական կիրառումն իր հերթին ունենում է մուլտիպլիկատիվ էֆեկտ տնտեսության համար, և սույն միջոցառումը նպատակ ունի նաև անկանխիկ եղանակով դրամական վճար ստացող կենսաթոշակառուների շրջանում ներդնել խթանող գործոններ՝ ընդլայնելու անկանխիկ գործառնությունների ծավալը՝ այդպիսով նպաստելով նաև շահառուների ֆինանսական գիտելիքների մակարդակի բարձրացմանը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) մեջ կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) կենսաթոշակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման 3-րդ կետում նշված գումար՝ սոցիալական պաշտպանության (ապահովության) ծրագրերով նախատեսված կենսաթոշակներ, պարբերական բնույթ կրող (որոշակի կամ անորոշ ժամկետով տրվող) նպաստներ և դրամական այլ վճարներ.

2) կենսաթոշակառուի բանկային հաշիվ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով բանկում բացված սոցիալական ապահովության հաշիվ.

3) ծառայություն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն.

4) կենսաթոշակառու (նաև շահառու)՝ անձ, ում անվամբ բացվել է կենսաթոշակառուի բանկային հաշիվը (ում նշանակվել է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված կենսաթոշակ), կամ անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչ՝ ծնող, որդեգրող, խնամակալ).

5) գործընկեր բանկ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման համաձայն ծառայության հետ սոցիալական ապահովության հաշվի պայմանագիր կնքած և միջոցառմամբ սահմանված պայմաններին համապատասխան իր միջոցների հաշվին կենսաթոշակառուներին հետվճար վճարող բանկ.

6) ավտոմատ գանձման սարք (նաև՝ ԱԳՍ)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված կարգով գործող մանրածախ առևտուր իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող սուբյեկտի մոտ տեղադրված՝ վճարային քարտերով վճարումներ ընդունող (ավտոմատ գանձող) սարք.

7) հետվճար՝ հաշվետու ժամանակահատվածում կենսաթոշակառուի կողմից կենսաթոշակային քարտի միջոցով ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռքբերման դիմաց ԱԳՍ-երով կատարված անկանխիկ վճարումներից, ինչպես նաև կենսաթոշակային քարտը թողարկած բանկի բանկոմատներում կոմունալ ծառայությունների դիմաց կատարված վճարումներից հաշվարկվող գումար, որը սահմանված ժամկետում ենթակա է փոխանցման կենսաթոշակառուի բանկային հաշվին:

5. Միջոցառումը պետք է ունենա կարճ անվանում և տարբերանշան (լոգո), որը սահմանված կարգով կիրառվում է միջոցառման իրականացման ժամանակահատվածում:

3. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Միջոցառման իրականացման հիմնական նպատակն է բարձրացնել կենսաթոշակառուների գնողունակությունը՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելիս:

7. Միջոցառման իրականացումը նպատակ ունի նաև խթանելու անկանխիկ եղանակով գործարքների կատարումը Հայաստանի Հանրապետությունում, ավելացնել սպառողների, մասնավորապես, կենսաթոշակառուների և սոցիալական խոցելի խմբերի կողմից ֆինանսական ժամանակակից գործիքների և տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքները, մեծացնել նշված գործիքների կիրառելիության տարածվածությունը:

8. Հանրապետությունում ներկայումս կենսաթոշակ է ստանում ավելի քան 560 հազար քաղաքացի, որից շուրջ 420 հազարը կենսաթոշակներն ստանում են անկանխիկ եղանակով, իսկ բանկերի միջոցով ստացողների թիվը կազմում է շուրջ 390 հազար, կամ կենսաթոշակ ստացողների մոտ 70%-ը, ինչը նշանակում է, որ միջոցառումը կունենա էական ազդեցություն կենսաթոշակառուների գնողունակության բարձրացման վրա:

9. Հաշվի առնելով վերը նշվածը՝ սույն միջոցառմամբ առաջարկվում է իրականացնել կենսաթոշակառուների կողմից անկանխիկ գնումների և վճարումների

գործարքներից պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության ձևաչափով կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելը:

4. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

10. Միջոցառման պոտենցիալ շահառու են հանդիսանում կենսաթոշակ ստացող անձինք, ովքեր կենսաթոշակն ստանում են անկանխիկ եղանակով՝ կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցվելու միջոցով:

11. Միջոցառման փաստացի շահառու են հանդիսանում միջոցառման գործողության ընթացքում ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռքբերման դիմաց կենսաթոշակային քարտի միջոցով ԱԳՍ-երով, ինչպես նաև կենսաթոշակային քարտը թողարկած բանկի բանկոմատներում կոմունալ ծառայությունների դիմաց վճարում կատարած կենսաթոշակառուները:

5. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

12. Սույն միջոցառմամբ նախատեսված՝ անկանխիկ եղանակով կատարված վճարումների հետվճարները հաշվարկվում են բանկերի կողմից յուրաքանչյուր ամիս՝ նախորդ ամսվա ընթացքում ԱԳՍ-երի միջոցով և տվյալ բանկի բանկոմատներում կոմունալ ծառայությունների դիմաց կենսաթոշակային քարտերով իրականացված գործարքներից (կատարված վճարումներից):

13. Միջոցառմամբ նախատեսված՝ անկանխիկ գործարքի գումարի հետվճարի չափը կազմում է 10%, որը ձևավորվում է միջոցառման մասնակիցների հատկացումներից՝ հետևյալ համամասնությամբ՝

1) պետություն՝ 5%.

2) գործընկեր բանկ՝ 5%:

Ընդ որում, գործընկեր բանկի կողմից յուրաքանչյուր շահառուի հետվճարից հաշվարկված եկամտային հարկի գումարին համապատասխան չափով ավելացվում է պետության կողմից տրամադրվող հետվճարի չափն այնպես, որ շահառուին փոխանցվող զուտ հետվճարը կազմի 10%:

14. Հետվճարի՝ մեկ ամսվա համար հաշվեգրվող և սույն միջոցառման 13-րդ կետով նախատեսված գումարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել 5000 դրամը՝ անկախ կատարված անկանխիկ գործարքների մեծությունից:

6. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

15. Միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ հիմք ընդունելով միջոցառման ընթացքի վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները:

16. Նախարարությունն ամենամսյա պարբերականությամբ պաշտոնական կայքէջում հրապարակում է վիճակագրական տեղեկատվություն առնվազն միջոցառման շահառու դարձած (օգտված) կենսաթոշակառուների թվի, նրանց տրամադրված ընդհանուր և միջին հետվճարների ցուցանիշները:

7. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

17. Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է, որ միջոցառման փաստացի շահառու կդառնա և առնվազն 3 ամիս անընդմեջ կստանա նախատեսված հետվճարը բանկային քարտով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների 80%-ը՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ